ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, քննության առնելով հայցվոր «Սմարթիմփայեր» ՍՊ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին,

ՊԱՐԶԵՑ

«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Հայցվոր) 08.04.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝

Դատարան) ընդդեմ ՀՀ Վիճակագրական կոմիտեի «ՀՀ ՎԿԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով բաց մրցույթի խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 27.03.2024թ.- ի կայացված որոշման 23-րդ և 24-րդ կետերն անվավեր ճանաչելու և որպես հետևանք Հայցվորի հայտը գնման ընթացակարգի պայմաններին բավարար գնահատելու և վերջինիս ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու պահանջների մասին:
Հայցադիմումը 08.04.2024թ.-ին մակագրվել է դատավոր Ա.Մկրտչյանին:
Դատարանի 12.04.2024թ.-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Հայցվորի կողմից Դատարանի արձանագրած թերությունները վերացվել են և հայցադիմումը կրկին ներկայացվել է 16.04.2024թ.-ին:

Դատարանը 19.04.2024թ.-ին կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, իսկ հայցադիմումի ներկայացման օր է համարվել 08.04.2024թ.-ը: Եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր է սահմանել 2024թ. մայիսի 31-ը:

Ներկայացված միջնորդությամբ հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ Հայցվորը 09.04.2024 թվականին ստանում է գրություն և 08.04.2024 թվականի թիվ 153-Ա հրամանը, որի համաձայն պատասխանող՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ հիմք ընդունելով «ՀՀ ՎԿԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը, հրամայել է «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գտել է, որ 08.04.2024 թվականի թիվ 153-Ա հրամանի կայացման իրավական հիմքը «ՀՀ ՎԿԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունն է, իսկ Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացվել է պահանջ՝ թիվ 3 արձանագրությամբ կայացված այն որոշումները ճանաչել անվավեր, ինչի հիման վրա Հայցվորին ՀՀ վիճակարական կոմիտեն ներառում է ցուցակում:

Այսինքն, թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու հետևանքով անվավեր կճանաչվի նաև Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ուստի վերոնշյալով պայմանավորված՝ Դատարանին խնդրել է հայցի հիմքը թույլատրել լրացնել հետևյալ ձևով.

- «Անվավեր ճանաչել «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով բաց մրցույթի խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 27.03.2024թ.-ի նիստով կայացված որոշման 23-րդ և 24-րդ կետերն և որպես հետևանք Հայցվորի հայտը գնահատել գնման ընթացակարգի պայմաններին բավարարող, վերջինիս ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից և վերացնել ՀՀ Վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 08.04.2024 թվականին կայացված «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 153-Ա հրամանը»:
Քննության առնելով միջնորդությունը՝ Դատարանն արձանագրում է.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:
Նույն իրավանորմի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:
Նույն իրավանորմի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:
Նույն իրավանորմի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:
Դատարանն արձանագրում է, որ ներկայացված միջնորդությամբ չի փոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը հարուցվել է, ինչպես նաև քննվող գործը դուրս չի գալիս առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:
Դատարանը միաժամանակ փաստում է, որ միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 199-րդ, 200-րդ, 234.9-րդ հոդվածներով, Դատարանը՝

Միջնորդությունը՝ հայցի հիմքի փոփոխություն թույլատրելու մասին, բավարարել. թույլատրել հայցի հիմքի լրացումը՝ միջնորդության մեջ շարադրված հիմքերով:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՈՐՈՇԵՑ

Միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու մասին, բավարարել. թույլատրել հայցի հիմքի լրացումը՝ միջնորդության մեջ շարադրված հիմքերով:

Հայցի առարկան շարադրել հետևյալ կերպ. «Անվավեր ճանաչել «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով բաց մրցույթի խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 27.03.2024թ.-ի նիստով կայացված որոշման 23-րդ և 24-րդ կետերն և որպես հետևանք Հայցվորի հայտը գնահատել գնման ընթացակարգի պայմաններին բավարարող, վերջինիս ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից և վերացնել ՀՀ Վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 08.04.2024 թվականին կայացված «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 153-Ա հրամանը»:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Արամ Մկրտչյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Signed by: ARAM MKRTCHYAN 1712720074
Date: Wed, 15 May 2024 16:13:03 GMT+04:0(